ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ЭДГАР ТАГАРЯН

ОСОБЕННОСТИ ДОЛГОСРОЧНОГО ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА АРМЕНИИ

Ключевие слова: *институциональная ловушка, высокотехнологичная продукция, институциональные реформы, технологический компонент*

Несмотря на то, что ВВП Армении значительно увеличился с 2000-х годов, даже в двузначных цифрах за несколько лет. Он был обусловлен ростом, зафиксированным в областях без долгосрочных перспектив. С учетом особенностей экономического роста Армении в разные периоды наблюдались четыре фазы роста и исследование осуществлено в соответствии с этими этапами, подчеркивая роль институтов, работающих особенно в направлении технологических изменений.

EDGAR THAGARYAN

PECULIARITIES OF LONG-TERM ECONOMIC GROWTH OF ARMENIA

Key words: *institutional trap, high-tech products, institutional reforms, technological component*

Although Armenia's GDP has grown dramatically since the 2000s, even at double digits in some years, it has been conditioned by the growth registered in areas without long-term prospects. Taking into account the peculiarities of Armenia's economic growth in different periods, four phases of growth have been observed, the analysis of these stages, highlighting the role of institutions operating especially for technological change.

ԱՐԾՐՈՒՆԻ ԹՈՐՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, ՀՊՏՀ

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ԲԵՎԵՌԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հիմնաբառեր. *եկամուտներ, բնակչություն, տնային տնտեսություն, բևեռացում, տրանսֆերտներ, կառուցվածք, աղքատություն*

Հոդվածում դիտարկվել է ՀՀ բնակչության դրամական եկամուտների դինամիկայի ազդեցությունը նրանց եկամուտների շերտավորման վրա:

2005–2015 թթ. վիճակագրական նյութի հիման վրա վերլուծվել են բնակչության եկամուտների կառուցվածքի փոփոխությունները: Արդյունքում բացահայտվել է բնակչության համախառն եկամուտներում դրամական եկամուտների տեսակարար կշռի աճը, որն էլ վկայում է հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորման դրական միտումների մասին:

Սակայն, ըստ դեցիլային խմբերի, տնային տնտեսությունների դրամական եկամուտների կառուցվածքի վերլուծությունը թույլ է տվել հետևություն անել այն մասին, որ հանրապետության բնակչության միջին շերտի կենսամակարդակի բարձրացման հիմնական աղբյուր են հանդիսացել աշխատանքային եկամուտները:

Մյուս կողմից, նշված գործընթացները հանգեցրել են նաև բնակչության՝ հարուստների և աղքատների խոր բևեռացման:

Բնակչության կենսամակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշը տնային տնտեսությունների համախառն եկամուտն է: Այդ ցուցանիշն ընդգրկում է ինչպես բոլոր դրամական մուտքերը, այնպես էլ սեփական արտադրության արդյունքների և այլ անձանցից կամ հարազատներից անվճար ստացված կամ մատուցված ոչ պարենային ապրանքների և ծառայությունների դրամական արտահայտությունը:

Ինչպես վկայում են աղյուսակ 1-ի տվյալները, 2005–2015 թթ. տեղի են ունեցել ՀՀ տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքի էական փոփոխություններ:

Այսպես՝ համախառն եկամուտների կառուցվածքում դրամական եկամուտների տեսակարար կշիռը 2005 թվականի 85,2%-ից 2015 թվականին հասել է մինչև 94,7%, իսկ բնաիրային մուտքերը համապատասխանաբար կազմել են 14,8% և 5,3%:

Տնային տնտեսությունների համախառն եկամուտների կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները վկայում են հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորման դրական արդյունքների մասին: Ընդ որում, դա առավել ինտենսիվորեն տեղի է ունեցել 2007–2009 թթ. ընթացքում: Միաժամանակ, նշված գործընթացներն էականորեն տարբերվում են ըստ քաղաքային և գյուղական բնակչության:

Այսպես՝ եթե քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունների դրամական եկամուտների տեսակարար կշիռը 2005 թվականի 93,6%-ից 2015 թվականին հասել է 97,9%-ի, իսկ բնաիրային եկամուտները նվազել և համապատասխանաբար կազմել են 6,4% և 2,1%, ապա գյուղական բնակավայրերում համապատասխանաբար՝ 70,5%-ից 88,1% և 29,5%-ից 11,9%: Վերջինս վկայում է գյուղատնտեսական արտադրության ապանքայնության մակարդակի բարձրացման մասին:

Նշված ժամանակաշրջանում դրական փոփոխություններ են կատարվել բնակչության դրամական եկամուտների մեջ՝ վարձու աշխատանքից եկամուտների բաժնի մեծացման առումով: Այսպես՝ վարձու աշխատանքից եկամուտները 2005 թվականի 43,9%-ից, շնորհիվ նվազագույն աշխատավարձի ամենամյա աճի, ստվերային տնտեսության կրճատման և այդ բնագավառում վարչարարության, աստիճանաբար (բացառությամբ 2006 թվականի) աճելով, 2009 թվականին կազմեցին 50,2%: Սակայն, այդ օրինաչափ գործընթացը խաթարվեց 2010-2011 թվականներին և շարունակվեց մինչև 2014 թվականը: Միայն 2015 թվականին հնարավոր դարձավ կանխել այդ բացասական գործընթացը. վարձու աշխատանքից եկամուտների բաժինը 2015 թվականին կազմեց 52,1%:

Աղյուսակ 1

ՀՀ տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքը (մեկ շնչի հաշվով՝ միջին ամսական) 2005–2015 թթ., %[1]

Եկամուտների տեսակները	Տարիներ											Այդ թվում՝			
												քաղաքային բնակավայր		գյուղական բնակավայր	
	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2005	2015	2005	2015
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
I. Դրամական եկամուտներ, այդ թվում՝	**85,2**	**85,8**	**88,8**	**90,8**	**91,8**	**91,6**	**92,3**	**92,9**	**93,1**	**94,1**	**94,7**	**93,6**	**97,9**	**70,5**	**88,1**
1. վարձու աշխատանք	43,9	40,7	48,8	49,0	50,2	48,6	48,9	48,7	48,0	47,9	52,1	56,9	59,1	21,5	37,6
2. ինքնազբաղվածություն	7,8	12,4	9,1	8,1	5,0	6,4	6,3	7,2	7,5	9,3	8,8	9,0	9,5	5,7	7,3
3. գյուղմթերքի և անասունի վաճառք	8,6	7,9	6,5	6,0	5,5	3,4	4,7	5,3	5,4	5,0	4,8	0,8	0,4	22,3	14,0
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
4. սեփականություն (վարձակալության վճարներ, տոկոսավճարներ, շահաբաժիններ)	0,2	0,4	0,2	0,1	0,1	0,1	0,4	0,3	0,4	0,4	0,2	0,3	0,3	–	–
5. պետական թոշակներ և նպաստներ	12,0	11,9	12,2	16,5	18,4	17,1	17,5	17,1	16,6	15,8	16,7	11,8	16,8	12,4	16,8
6. տրանսֆերտներ, որից՝	9,0	7,9	9,4	9,1	8,7	11,4	11,1	10,0	10,5	11,6	8,5	11,2	8,7	5,1	7,9
- Հայաստանում ապրող հարազատներից	1,8	1,5	1,5	1,5	1,2	1,4	1,5	1,1	1,2	1,3	0,8	2,4	1,1	0,7	0,2

[1] Կազմված է ըստ՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 62–63: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009, էջ 88–89: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 122: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 104–105: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 114–115:

- Հայաստանից դուրս ապրող հարազատներից	7,2	6,4	7,9	7,6	7,5	10,0	9,6	8,9	9,3	10,4	7,6	8,8	7,6	4,4	7,7
7. Այլ եկամուտներ	3,7	4,6	2,6	2,0	3,9	4,6	3,4	4,3	4,7	4,1	3,6	3,6	3,1	3,5	4,5
II. *Ոչ դրամական եկամուտներ, այդ թվում՝*	**14,8**	**14,2**	**11,2**	**9,2**	**8,2**	**8,4**	**7,7**	**7,1**	**6,9**	**5,9**	**5,3**	**6,4**	**2,1**	**29,5**	**11,9**
1. սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից	13,3	13,0	9,6	8,2	7,3	7,4	6,7	6,4	6,3	5,3	4,8	4,5	1,5	28,6	11,6
2. անվճար ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ	1,5	1,2	1,6	1,0	0,9	1,0	1,0	0,7	0,6	0,6	0,5	1,9	0,6	0,9	0,3
Ընդամենը ամբողջական եկամուտ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Ընդ որում, այդ գործընթացը միաժամանակ տեղի է ունեցել ինչպես քաղաքային, այնպես և գյուղական բնակավայրերում, թեև վերջինիս բաժինը մնում է դեռևս ցածր մակարդակի վրա՝ 2015 թվականին կազմելով 37,6%: Դա մեկ անգամ ևս վկայում է գյուղական բնակավայրերում շուկայական հարաբերությունների զարգացման դեռևս ցածր մակարդակի և հիմնականում մանր բնամթերային տնտեսությունների գերակայության մասին: Այդ գործընթացը տեղի է ունեցել ինքնազբաղվածությունից դրամական եկամուտների չնչին աճի պայմաններում՝ ինչպես ամբողջությամբ հանրապետությունում, այնպես էլ քաղաքային և գյուղական բնակավայրերում:

Կտրուկ կրճատվել է գյուղմթերքների և անասունների վաճառքից դրամական եկամուտների տեսակարար կշիռը՝ 2005 թվականի 8,6%-ի դիմաց 2010 թվականին կազմելով 3,4%: 2011 թվականին նկատվեց որոշակի աճ՝ կազմելով 4,7%, 2013 թվականին՝ 5,4%, իսկ 2014 թվականից այն կրկին նվազեց՝ 2015 թվականին կազմելով 4,8%: Սակայն, ցավոք, այն էականորեն նվազել է նաև գյուղական վայրերում՝ 2005 թվականի 22,3%-ի դիմաց 2015 թվականին կազմելով 14,0%:

Շատ ցածր մակարդակի վրա են գտնվում բնակչության եկամուտները սեփականությունից, որը վկայում է քաղաքային և գյուղական բնակավայրերում շուկայական հարաբերությունների զարգացման դանդաղ տեմպերի, կորպորատիվ սեփականության և վարձակալական հարաբերությունների ձևավորման բացակայության մասին:

Ի տարբերություն դրա, զգալիորեն աճել է պետական թոշակների և նպաստների բաժինը՝ կազմելով բնակչության եկամուտների գրեթե 1/5 մասը: Ընդ որում, այդ գործընթացը բնորոշ էր ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերի տնային

տնտեսություններին: Այսպես՝ քաղաքային բնակավայրերում այդ ժամանակաշրջանում դրանց տեսակարար կշիռն աճել է 5,0 տոկոսային կետով և 2015 թվականին նրանց եկամուտներում կազմել է 16,8%, իսկ գյուղական բնակավայրերում՝ 4,4 տոկոսային կետով, կազմելով նույնպես 16,8%:

Չնայած 2009 թվականին ՀՀ տնային տնտեսությունների եկամուտներում հիմնականում արտասահմանից ստացվող տրանսֆերտների բաժինը մի փոքր նվազել է, այնուամենայնիվ, դրանց նշանակությունը վերջին տարիներին մեծացել է: Այսպես՝ 2008-2009 թթ. տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքում տրանսֆերտները դրամական եկամուտներում չորրորդ տեղից տեղափոխվել են երրորդ տեղ, որը տեղի է ունեցել ոչ դրամական եկամուտների նվազման հաշվին: Ընդ որում, դրան չխանգարեց նույնիսկ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Ավելին, դրանց տեսակարար կշիռը հանրապետության բնակչության դրամական եկամուտներում 2009 թվականի 8,7%-ից 2010 թվականին աճեց մինչև 11,4%՝ գերազանցելով նույնիսկ 2007 թվականի մակարդակը: 2011 թվականին այդ ցուցանիշը մի փոքր նվազեց՝ կազմելով 11,1%, իսկ 2012 թվականին՝ 10,0%: 2013-2014 թվականներին այդ ցուցանիշը սկսեց աճել, սակայն կտրուկ նվազեց 2015 թվականին՝ հասնելով 8,5%-ի: Վերջինս, մեր կարծիքով, պայմանավորված էր ՌԴ տնտեսության բացասական դրսևորումներով: Վերոնշյալը, մի կողմից, վկայում է հանրապետությունում ամուր ընտանեկան հարաբերությունների, մյուս կողմից՝ ուրիշի հաշվին ապրելու միտումների ընդլայնման մասին, որը, ցավոք, արդեն կրում է խրոնիկական բնույթ: Վերջինս, մեր կարծիքով, հանրապետության բնակչության աշխատանքային միգրացիայի հետագա զարգացման տնտեսական հիմքն է կազմում: Ընդ որում, դա մեծապես վերաբերում է գյուղական բնակչությանը, որի շրջանում դրանց տեսակարար կշիռը 2005 թվականի 5,1%-ից 2013 թվականին աճեց մինչև 11,1%[1]:

Հաշվի առնելով ՀՀ բնակչության համախառն եկամուտներում դրամական եկամուտների աճող դերը՝ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ըստ դեցիլային խմբերի առավել քիչ և առավել շատ ապահովված շերտերի դրամական եկամուտների կառուցվածքի դինամիկայի վերլուծությունն ուսումնասիրվող ժամանակաշրջանում:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 2-ի տվյալները, 2005–2010 թթ. ՀՀ բնակչության միջին շերտի կենսամակարդակի բարձրացման հիմնական աղբյուր են հանդիսացել աշխատանքային եկամուտները և արտերկրում ապրող հարազատներից ստացվող տրանսֆերտները:

Այսինքն՝ դրամական եկամուտների աճի հիմնական գործոն է հանդիսացել աշխատանքը, այդ թվում նաև՝ աշխատանքային միգրացիան: 2015 թվականին զգալի անկում գրանցվեց տրանսֆերտների ցուցանիշի առումով. դրանց տեսակարար կշիռը 2010 թվականի համեմատ նվազեց 5,2 տոկոսային կետով, այդ թվում՝ արտերկրից ստացվողինը՝ 4,2 տոկոսային կետով:

---

[1] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 105:

ՀՀ տնային տնտեսությունների դրամական եկամուտների կառուցվածքն ըստ դեցիլային խմբերի 2005 թ., 2010 թ. և 2015 թ. (մեկ շնչի հաշվով՝ միջին ամսական), %[1]

Դեցիլային խմբեր	Տարիներ	Դրամական եկամուտներ	Այդ թվում՝						
			Աշխատանքից	Գործունեության, գյուղատնտեսության	Գույքային եկամուտներ կամ գույքի վաճառքից	Տրանսֆերտներ	Որից		Այլ եկամուտներ
							Հայաստանում նախկին ԱՍՀ-ներից	Հայաստանից դուրս նախկին ԱՍՀ-ներից	
I	2005	100	6,3	43,1	27,3	6,7	1,9	4,8	16,6
	2010	100	11,5	52,2	9,2	6,0	2,1	3,9	21,1
	2015	100	12,4	48,0	12,0	5,1	0,8	4,3	22,5
V	2005	100	51,4	26,9	9,5	7,2	1,7	5,4	5,0
	2010	100	58,1	22,7	3,6	10,1	1,6	8,5	5,4
	2015	100	58,9	26,9	4,6	4,9	0,6	4,3	4,7
X	2005	100	67,5	3,6	9,9	15,1	1,8	13,3	3,9
	2010	100	64,3	7,7	2,7	20,6	1,4	19,2	4,7
	2015	100	76,4	6,4	5,3	9,8	0,7	9,1	2,1

ՀՀ բնակչության միջին շերտի դրամական եկամուտներում պետական սոցիալական տրանսֆերտների տեսակարար կշիռը 2005 թվականի 26,9%-ից 2010 թվականին իջել է՝ հասնելով մինչև 22,7%-ի, ինչը հիմնականում պայմանավորված էր երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների ազդեցությամբ: Սակայն, հետագայում այդ հետևանքների հաղթահարման և վարվող սոցիալական քաղաքականության արդյունքում սոցիալական տրանսֆերտների տեսակարար կշիռը վերականգնվեց:

Պատկերը փոխվում է, երբ դիտարկում ենք ՀՀ բնակչության 10% առավել ապահովված շերտերի դրամական եկամուտների կառուցվածքի դինամիկան: 2005–2010 թթ. բնակչության այդ կատեգորիայի կենսամակարդակի աճի հիմնական աղբյուրը պետական սոցիալական և արտերկրում ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտներն են: 2015 թվականին այդ պատկերն արմատական փոփոխության ենթարկվեց. շեշտակի աճել են աշխատանքային եկամուտները՝ 2010 թվականի համեմատ աճելով 12,1 տոկոսային կետով, փոխարենը՝ նվազել պետական սոցիալական (1,3 տոկոսային կետով) և բարեկամներից ստացվող (հատկապես արտասահմանում ապրող) տրանսֆերտները (10,8 տոկոսային կետով):

[1] Կազմված է ըստ՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 67: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 120-121:



Գծապատկեր 1. ***Լորենցի կորերը ՀՀ-ում՝ 1996 թ., 2004 թ. և 2015 թ.***[1]

Սակայն, պատկերը կտրուկ փոխվում է, երբ վերլուծում ենք ՀՀ բնակչության 10% նվազագույն ապահովված շերտերի դրամական եկամուտների կառուցվածքի դինամիկան: Այն վերջին տարիների ընթացքում էական փոփոխությունների է ենթարկվել սոցիալական տրանսֆերտների ցուցանիշի առումով: Արդյունքում՝ սոցիալական տրանսֆերտների տեսակարար կշիռը 2010 թվականի 52.2%-ից իջել է՝ 2015 թվականին հասնելով 48,0%-ի: Կայուն բարձր տեսակարար կշիռ ունեն աշխատանքային եկամուտները և այլ եկամուտները: Ընդ որում, վերջին փաստը կարծես թե վկայում է բնակչության այդ շերտի՝ դեպի ստվերային տնտեսություն և աշխատանքի ստվերային վարձատրություն ակտիվ «հեռանալու» մասին: Այդ տնային տնտեսությունների թվին, առաջին հերթին, պետք է դասել աղքատության նպաստներ ստացող ընտանիքները, ոչ լրիվ ընտանիքները, կենսաթոշակառուներին, գործազուրկներին, հաշմանդամներին, ուսանողներին, ինչպես նաև չորակավորված կամ ցածր որակավորում ունեցող վարձու աշխատողներին: Այս կապակցությամբ օրինաչափ է թվում նվազագույն աշխատավարձի առավել արագ աճի տեմպի ապահովումը՝ բնակչության այդ խմբի աշխատանքային եկամուտների մասնաբաժնի մեծացման նպատակով: Եկամուտներն արդարության պայմաններին համահունչ կլինեն այն

[1] Կազմված է ըստ՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001 (1999, 2000): Եր., ՀՀ ԱՎԾ, 2001, էջ 88: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009: Եր., ՀՀ ԱՎԾ, 2009, էջ 93: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016: Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 105:

ժամանակ, երբ դրանց շերտավորումը, նախևառաջ, կապված լինի աշխատանքի վարձատրության շերտավորման հետ:

Հասարակության՝ հարուստների և աղքատների բևեռացման միտումները 1996–2015 թթ., ըստ դեցիլային խմբերի, կարելի է ներկայացնել Լորենցի կորերի միջոցով:

Ըստ Լորենցի մեթոդի՝ եկամուտների բաշխման անհավասարությունն արտացոլված է գծապատկերում՝ կորի օգնությամբ, որը բնութագրում է եկամուտների բաշխման շեղումը դրանց բաշխման բացարձակ հավասարության վերացական հնարավորությունից:

Կորի ճկվածության բնույթն արտացոլում է բնակչության տարբեր խմբերին բաժին ընկնող եկամուտների բաշխման անհավասարության աստիճանը:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, Լորենցի կորի ճկվածությունը 1996 թվականին ցույց է տալիս բնակչության եկամուտների բաշխման անհամաչափության կամ շերտավորման աճը շուկայական բարեփոխումների սկզբնական շրջանում:

Սակայն, շուկայական բարեփոխումների առաջին փուլի ավարտի և ՀՀ տնտեսության կայունացման հետ կապված, 2004 թվականին տեղի է ունենում բնակչության եկամուտների շերտավորման էական բարելավում: Հետագայում այդ դրական միտումը մի փոքր թուլանում է, և 2015 թվականին Լորենցի կորի ճկվածությունը ստանում է առավել սահուն տեսք:

Այսպիսով՝ բնակչության եկամուտների շերտավորման բնագավառում, ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականության արդյունքում, Լորենցի կորը զգալիորեն մոտեցել է բնակչության եկամուտների բացարձակ հավասար բաշխվածության գծին:

АРЦРУНИ ТОРОСЯН

ДИНАМИКА ДЕНЕЖНЫХ ДОХОДОВ НАСЕЛЕНИЯ РА И ТЕНДЕНЦИИ ПОЛЯРИЗАЦИИ

Ключевые слова: *доходы, население, домашнее хозяйство, поляризация, трансферты, структура, бедность*

В статье рассмотрено влияние динамики денежных доходов населения РА на дифференциацию их доходов.

На основе статистического материала за 2005–2015 гг. проанализированы изменения в структуре доходов населения. В результате выявлен рост удельного веса денежных доходов в совокупных доходах населения, что свидетельствует о положительных результатах формирования рыночных отношений в республике.

Однако анализ структуры денежных доходов домашних хозяйств РА по децильным группам позволил сделать вывод о том, что основным источником повышения уровня жизни для средних слоев населения республики являются трудовые доходы.

С другой стороны указанные процессы привели также к глубокой поляризации населения на богатых и бедных.

ARTSRUNI TOROSYAN

THE DYNAMICS AND POLARIZATION TENDENCY OF MONETARY INCOMES OF THE POPULATION OF THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *incomes, population, household, polarization, transfer, structure, poverty*

The effect of the dynamics of monetary incomes of the population in the Republic of Armenia on the lamination of their incomes is considered in the article.

On the basis of statistical data of 2005–2015 the changes of population's income structure are analyzed. As a result the growth of specific weight in the gross incomes of the population is revealed. This proves the positive results of the formation of trade relations in the Republic.

However, the analysis of the structure of monetary incomes of households by decile groups has permitted to come to a conclusion that the source of increasing the living standards of the middle layer of the Republic's population has been labor incomes.

On the other hand, the above mentioned processes have led to the polarization of population into the reach and the poor.

ԾՈՎԻՆԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. *սոցիալական քաղաքականություն, սոցիալական ինովացիաներ, սոցիալական գործընկերություն, անհավասարություն, խոցելի խմբեր, անապահով խավ*

Ներկայացվել են սոցիալական քաղաքականության միջոցառումների իրականացման ժամանակակից առանձնահատկությունները: Քննարկվել են սոցիալական բարեփոխումների նոր ուղղությունների որոնման և սոցիալական ինովացիաների կիրառման կարևորությունն ու հնարավորությունները: Մեկնաբանվել են սոցիալական գործընթացների որոշ առանձնահատկություններ ՀՀ-ում: Հիմնավորվել է սոցիալական ինովացիաների ուսումնասիրության նոր մեթոդների բացահայտման անհրաժեշտությունը և ներկայացվել է սոցիալական ինովացիաների նոր մեկնաբանություն:

Սոցիալական քաղաքականության միջոցառումները հաճախ կրում են կարճատև բնույթ, որովհետև, հասարակական զարգացմանը զուգահեռ, մարդու կողմից բացահայտվում են նոր սոցիալական մարտահրավերներ, իսկ ամրագրվող վարքագծի համընդհանուր կանոնները ժամանակի ընթացքում արդյունավետորեն չեն գործում այդ նույն